

ՀԱՐԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարեկան դիմել է 7 տարեկ (հինգ տարեկ) Գաղափարաբանության դասընթացը պիտի դիմեն այս հասցեով. Bo Tughayats. Bo Pe-dakuyi Armanchoy Tazetun „Miasnec“
Թիֆլիսում կարելի է ստորագրել խմբագրատան մէջ (ընթերցանող տուն) և իմանալ ընթերցարանում:

ՄԱՅԱԿ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Մասնավոր յայտարարութիւն տպել տուող պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կողմէ արժաթ: Ցայտարարութիւնները տարւում են չափերէն, Բուսերէն, Պրացերէն, Ֆրանսիացիէն, Գերմաներէն և Թուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՒԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Դանուցում: Մեր տնտեսական ապագայը, երբ ինչ տեսակի է: Թիֆլիսի վաճառականները: Նամակ Ալեքսանդրապոլից: Նամակ Գորայից: Ներքին լուրեր: Ստաւրիէ տեսակի է: Ինչ է բուրժուազի: Նամակ Պարսկաստանից: Արտաքին լուրեր: Սառն լուրեր: Ցայտարարութիւններ: Բանասիրական:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Խմբագրութիւն „Մշակ“ լրագրի դարձնալ խնդրում է այն իր բաժանորդներին (թէ Թիֆլիսի, թէ գաւառների մէջ) որք մինչև այժմ ներկայ 1872 թուի բաժանորդութիւնն վճարը հատուցած չեն, ուղարկել խմբագրութեանը իրանց տարեկան վճարը:

Խմբագրատունը բացէ տուաւ 9-ից մինչև 11 ժամ, իսկ երեկոյնս 5-ից 7-ը (բացի կիրակի օրերից):

ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՊԱՐԱՅ

Մեր ամեն մտածող և ցաւակցող մարդիկների գանգատի առիթը լինում է այն, որ մեր հայրենի գիւղական ազգաբնակիչները, չը նայելով որ հին ժամանակներում հայաց ազգը երկրագործական ժողովուրդ է եղել, սակաւ հակում ունէ գէպի երկրագործութիւնը: Ամեն երևոյթը իր պատճառներն ունէ: Անհրաժեշտ է այն իրողութիւնը, որ հայը թէ Վրաստանում, թէ Արմինիայում, երբ կարողանում է, թողնում է գիւղը և երկրագործական պարագմունքը և դիմում է քաղաքներ...: Եթէ նա փոքր ինչ գումար ունէ, նա սկսում է մանրավաճառութիւն անել, ի՞նչ է, մշակութիւն, համայնութիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՐԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երևանից եօթ մօտ հեռու... գիւղումը ընկալում էր մէկ մարդ, որը անունն էր Մարկոս:

Մարկոսն էր բարի և աշխատասեր մարդ. նա իր գիւղական սովորութեամբ, պարագմունքներով, դարձնում իր ժամանակին վաճառք, ցանում էր իւր հողը ամառը չուտով վերջացնում էր իւր կարգը: Երբ անցնում էր դաշտից բամբակը, իսկ ձմեռը պարագմունքներ կտաւ գործելով: Նա ձյունից կտաւ արտաքին իր սրբազան պարագմունքը, առաւօտը վաղ վեր էր կենում, երկրից էր դուրս, ջրանոցները աղբիւրից փնտր տուն էր դառնում իւր բանին:

Սորա ամուսին Մարիամը, ամբողջ օրը իւր զուտը Մարկոսի հետ զբաղւած էր տնային գործերով: Թոյնիւրը վառում էր, հացը թխում, կերակուրը պատրաստում: Մարիամը իւր կողմից ևս աշխատում էր իւր ծնողաց ինքն թիթեանի: Ամեն սրբութեամբ կատարում էր իւր օրգական պարագմունքը: Իրականից առաւել սիրում էր նա իւր ծնողներին, և միշտ անտարաձիկ կատարում էր նրանց ասած բաները, որոնք առհասարակ վերաբերում էին տնային գործերին:

Երբ իր կանոնաւոր մշակութիւնը, երկրագործութիւնը կորցնում է այդպէս իր ամեն ինքնիւր, իր ամենանշանակաւոր նշանը, երբ ինքնիւր է ամենաանողջ և զօրեղ բանը, որովհետեւ գիւղացի քաղաք գաղթողները լինում են ի հարկէ մեծ մասամբ միջին հասակի, երիտասարդ մարդիկ, որք ամենից շատ հարկաւոր են հողի մշակութեան գործի համար:

Բայց ի՞նչ է սորա պատճառը: Մենք տեսնում ենք մի երևոյթը ունէ իր սկզբնապատճառը:

Նախ քան խօսենք պատճառների վերա, որք գոյց շատ բարդաբան են, գրենք մի հայեացք Եւրոպայի երկու երկիրների վերա, որք երկրագործութեան գործի մէջ երկու ծայրայեղ բևեռների կարող են համարվել, չը նայելով որ երկուսն էլ տնտեսական բարեկեցութեան մեծ աստիճանին են հասել: Մենք կամենում ենք խօսել Անգլիայի և Շվեյցարիայի մասին: Երկու երկիրներում երկրագործութիւնը շատ ծաղկեալ դրութեան մէջ է, միայն թէ ձանապարհը որով ընթացել են նրանք, միմեանց բոլորովին հակառակ է: Անգլիայում հողը սեփականութիւն է մեծ և հարուստ կալվածատերերի, որք իրանց մեծ գումարները առանց փոխադրի (բիւլ) կարողանում են գործ դնել երկրագործութեան դրութիւնը բարեկեցութեան, հողը վաճառել համար անդադար նոր և կատարելագործված միջոցներ մտցնելու, նոր մեքենաներ և գործիքներ ընդունելու, տնտեսական երկրագործութեան առաջադիմութեանը անընդհատ հետեւելու, երկրագործ դասի նիւթական պիտոյքները ժամանակ առ ժամանակ գրամական կերպով լրացնելու, նոցա մէջ ընկերակցութիւնների կազմելու նպատակով...: Մենք չենք խօսում այն բանի վերա, թէ այդ դրութիւնը պատճառ է լինում որ երկրագործ դասը միշտ կալված է

մնում մեծ գումարատէրեցի, որովհետեւ իր բարեկեցութեամբ նրանց է պարտական...:

Շվեյցարիայում ընդհակառակն հողը բաժանված է մեծ մասամբ փոքր կտորների վերա, որոց տէրերը իրանք գիւղացիքն են: Բայց ի՞նչ է բռնում այդտեղ մեծ գումարներ (կապիտալների) տեղը, գիւղացիների մէջ ընկերակցութիւնները, որոց միջոցով նմանապէս ձեռք է բերվում մեծ դրամադուլ, որ գործ է դրվում երկրագործութեան դրութեան բարելոցելուն:

Մեր հայերի երկրագործ դասի մէջ չը կան մեծ կապիտալիստ կալվածատէրեր ինչպէս Անգլիայում, չը կան ուրիշ կողմից ինքնազնութեան սկզբի վերա հիմնած ընկերակցութիւնները, ինչպէս Շվեյցարիայում:

Երբ տարին աջող է, երկրագործի վիճակը դեռ տանելի է, իսկ եթէ հասաւ երաշտային տարին, կամ գիւղացին անձնական պտուճառներով չունի միջոց իր արտերը ցանելու, այն ժամանակ նա մի ելք ունէ իր դառն վիճակից դուրս գալու... պարտքով առնել մի գումար, որին վճարում է ահագին տոկոսները: Նա պիտի մեծ տոկոսներ վճարի պարտքանախրոյ, պիտի ցանք առնի, իր արտերը վարի, պետք է արքունական հարկ տալ այդ փոխ առած գումարից, և դարձնալ ստիպված է նոր պարտքեր անել, այնպէս որ երբեք չէ գուրու գալիս իր պարտքերից: Չը կայ մի ընդհանուր գանձարան, որին նա կարողանար դիմել նեղ նիւթական դրութեան մէջ փոքր տոկոսներով մի գումար փոխ ուղելու: Երկրագործական գործիքները, նա հապետական դրութեան մէջն են, և նա չունէ մի կողմից այնքան հասկացողութիւն, որ ըմբռնի կատարելագործված մեքենաների օգուտը, իսկ միւս կողմից, եթէ հասկանար էլ, չունէ երբեք պատրաստի գումար այդպիսիները ձեռք բերելու: Լոկ բարեյական քա-

րողները, թէ մեր գիւղացին ազգաբնակչութիւնը պիտի լուսաւորվի, պիտի առաջադիմութիւն սիրէ, թողնի իր հնացած, նահապետական գործիքները ու մտցնի նորերը, պիտի հաւատարիմ լինի երկրագործութեան պարագմունքին, անգործ գործին օգնելու... մեղ մօտ չը կայ անդիական ընդարձակ տնտեսութիւնը իր մեծ կապիտալներով, չը կայ ուրիշ կողմից շփեցարական նեղ տնտեսութեան պէս զարգացած երկրագործութիւնը գիւղական համայնքի և ինքնազնութեան սկզբի վերա հիմնած, իր ընկերակցութիւններով, ընդհանուր գանձարաններով, գիւղական բանկերով... երկրագործը ի հարկէ այդ ամենը չէ հասկանում և անօգուտ կը լինէր նորան այդ քարոզել, նա մի բան է զգում միայն, այն է որ նորան պակաս են նիւթական միջոցները, այդ ամենախաբող գործիչ ամեն տնտեսութեան մէջ, նորան պակաս է երկրագործութիւնը առաջ տանելու համար գիւղական կրէդիտը:

Եւ նա անդադար և անդադար դադարում է քաղաքները, թողնելով ապարդիւն երկրագործական պարագմունքը, հաշտվելով մի անբնական հրէշաւոր զգացմունքի հետ, ընտանիքի և հայրենիքի յաւելու անկան կորուստ օր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՅՏԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ԻՐԱՆԻ ՇԱՌԱՅՔԸ

Թիֆլիսի վաճառականները ամենակենսական մտածում իրանց ծառաների դրութիւնը փոխելու, որ ներկայ ժամանակում շատ աննախանձելի է:

Վաճառականների համար ծառան է ինչպէս մէկ մշակ, որի պարտաւորութիւնն է առաւօտան վաղ գալ վաճառատուն, նայել բոլոր գործերին, անել առուտուր և խա-

լա գիտեմ եւ աղջիկն է սիրելի Դարուստանից Մարիամը:

— Դէ տառ. է, իմ ես պահում, հենց հըմի կը գնամ, էլի կը դրկեմ, որ նշան դնեն:

— Մուկաթ Գալօթի թուռն է սիրել, ընձի սանամբ Դարգիլին ասաւ, թէ մեր Մարգիլը չուն իրկիւնը ընտանց անից չի գատառում:

— Այ հօ, պառաւ, խելքդ հացի հետ ես կերէ, ես Մուկաթ Գալօթի թուռն կառնեմ, ընտանց աղջիկ կընանքի անսխալութիւնը տալ գեղը դիտի, իմ քօ միտն էլ չէ, որ էն տարին ընտանց աքլորը Գուրօնից արջօրի հետ կուտել էր, որ Գուրօնից տղէն ընտանց աքլորին քարով զարկել էր, Գալօթի հարսը անխնայը առաւ Գուրօնի խոկից, կոխեց տունը: Թուրքը կտաի, անասի դեօր, զղի ալ-ղը-րաղի գեօր, բեղի ալ... (մօրը տես, աղջիկն ասաւ յայրը տես, կառնաւ ասաւ) ես Մուկաթ Գալօթի տնից աղջիկ կուղեմ:— Տօ, մարդ, դու իմ ես ըտեց անխելք խօսում, դուն էլ ես խելքով, բա քո տղէն իմ է ծուռ. «մարդիկը չուն չիղը մարդ» ամէն աղջիկ մօրը կը քաշի, Հարցրեց Մարիամը:

— Ես բան եմ տուում, իմքը բամբակ է դրում, ես հըլայ ասում եմ Մուկաթ Գալօթի աղջիկը չեմ տանի, դու ինչ ես ասում:

— Գոթի փոխուել էլ իմ ես աղբուրում: Ինչ ասեցի:

Այս ընտանիքը վարում էր բաւականին բաղդաւոր կեանք: Մարգիլը իւր կնոջը սիրում էր չափազանց, միմիայն երբեքն քարկանալուց չէր անվայել խօսքեր էին խօսում: Մէկ մէկու, շատ յարմար և երջանիկ կեանքը վերցնում էր միայն սրանց սրդի Սարգիսը:

Սարգիսը, չը նայելով որ սրդէն քսան տարեկան հասակումն էր, բայց բանի վրայ հոգ չէր անում, միայն մտածում էր իւր հագուստի և մաշկի լաւ պահելու վրայ: Նա շատ անգամ տուն չէր գալիս. ողորմելի, ծերունի, ծնողը չէին համարձակվում խօսել, որովհետեւ նա իւր կողմից վարմունքով և համարձակ պատասխաններով միայն վերաբերւում էր խելք ծնողաց սիրտը:

Մի օր երեկոյան Մարիսը իւր սովորութեամբ կտաւ գործում: Մարիամը ծախք էր մանում, իսկ հոգնած Սառանը ննջում էր ճրագի առաջ նրստած: Մարգիսը յանկարծ հարցրեց իւր կնոջը. — Տօ, Մարիս, մեր Սարգիսը քեզները հօր է դնում:

— Եսիմ, վարամ թալի Սարգիսը. տնեսա էլի ում, աղջկայ հետն է խօսում, պատասխանեց Մարիամը:

— Աստուած, եւրալ կըլի, որ իմ հոգին առնես ես էս ու փոխի ձեռնից պոծնիմ: Իմ միւր կե-

րաւ թողեց օսկոսա. քեզ դնեմ Գարեշի չալակը, կանչեմ իմիս որդի: Աստուած պատիճեն, հօ տղայ չի, հի Գրիգոր Դարեկիցի, բարի լուսի քաղցրիկ Գրիգորստ, Աստուած, ինձ ունեմ էրկու որդի, Սառանը ընձի, Սարգիսը քեզի: Վեր առ, ես չեմ ուղում ըտեց տղէն, թող մնանի:

— Անըծի, անըծի շատ ունիս: Դու ես մէկ աղջիկ, մէկ տղա, աչք ու երկուսը սկսեցինք է—ասաց Մարիամը:— Տօ պառաւ: Չանիս հասել է ինչ անեմ: Պատասխանեց Մարիսը:

— Ինչ անեմ. նշանի ինչ տեսա: Էլ իմ ես գոռ բուկ նման, նստել ու բըւում մի գլխին: Գեղը վեր աղջիկ է, մէկն առ թող խելքը գալ դիտել: «Մեծաց խօսք է կասն, կնիկը խելք կը բերի մարդու դիտել»:— Գրողը տանի ըտեց որդուն. ոչ մէկ փեշա գիտի, ոչ կարողաւ, ես նշանեմ, ընչով գոյս պահի. մաղուլ քանի երկալ էր, կարգում էր, գնում էր ժամ տիրացու Միկոյի հետը, փոխեր ասում: Չեմ գիտում ընչի բերդան խելք էրկիւնէն բնութիւնը փոխեց: Մարդ մարդու կտաի ախրը փոչ ըլի. ես օյլնը եկել է Սարգիս գլխի:— «Մարդ Աստուած, քեզ ասում եմ, նշանի. խելքը կը գալ դիտել, կրկնեց Մարիամը:

— Տօ, որ տեսվեր չի ուղի: Թող ասի, հերկի, էս մարդի աղջիկը առ ինձի, ես էլ առնեմ, կըլ չառայ թող զանգատի: Պատասխանեց Մարիսը:

ի վրայ 7, 8 կամ 9 րոպեի վաճառելով (թէ պէտ
ն 6 տարի առաջ 4, 5; կամ 6 րոպեի էր վաճառ-
վում) տալիս է Վոլոգային մեծ հարստութիւն:
Ահա հինգերորդ տարին է, որ տարին այդ բարձր
գններն ունի. այս տարին էլ տեղի 8 մանէթով առ-
նորները, Նիմայի տոնավաճառում 11 կամ 11
50 կոպ. վաճառելով, մեծ օգուտներ ստացան:
Կան վաճառականները և այսպիսիները, որոնք
Վարբանդում տորոնը կր ապ. Կն աղալ տալիս
ու յետոյ տանում Ռուսաստան վաճառելով:
Յորենի բերքը շատ առատ է լինում. հասկնով
այս երկու տարուա մէջ դանադան քաղաքներում
եղած հացի պակասութիւնը, Վոլոգայի իրան բա-
ժինը լրիւ ունէր, բայց որովհետեւ այլ և այլ քա-
ղաքները շատ մարդիկ եկին տեղի յորեն առնե-
լու, դրա համար երկու տարի է, նրա փութը մի
մանէթով է վաճառվում, բայց նրանից առաջ 30
կամ 40 կոպէկ էր:

Տանձի և խնձորի բերքը այնքան շատ է լինում,
որ դրանցից մեծ քանակութեամբ տանում են դա-
նազան քաղաքներ վաճառելու (առաւել Աստրա-
խան քաղաքը). տանձը այնպէս ծախելուց բաշխալ
տեղս թնկիւնների մէջ եփում են, որը չորանալուց
յետոյ, ունենում է մի ուրիշ տեսակ քաղցրահամ
ձաշակ և տեղական լեզուով «դալի» է ասում:
(Իւրաքանչիւր տարի ստացվում է մինչև 60 հա-
զար փութ) սրան էլ քաղաքների մէջ Աստրախան
տանելով, փութը վաճառում են 90 կոպէկից մինչև
1 րոպեի 80 կոպ. նայելով համեմատութեան շատու-
թեանը ու սակաւութեանը) դալից Ռուսաստա-
նում, ինչպէս ասում են, առնողները խմիչք են
գործում, կամ գործ են ածում զանազան խմիչք-
ների մէջ:

Շերամ պահելը նոյնպէս ծաղկած է Վոլոգայում,
համարեա ամէն գիւղում. պարագայում են չերա-
մապահութեամբ, միայն ահա չորրորդ տարին է,
որ բերքը առաջուկ նման առատ է լինում: Ինչ-
պէս ասում են 65, 66, և 67 թուերին Վոլոգայի
տանում էր 900 կամ 1000 փութ թէլ, բայց
այժմ 400 փութ հազիւ է տալիս: Թնկի փութը
որ երբեմն տեղս 100 մանսից 140 մանէթ էր
վաճառվում (նայելով արտադրանքի բերքին) այժ-
մը արժէ 120 րոպեի: Այս տարի թէլը տեղս
շատ սակաւ է, որովհետեւ մեծ մասամբ սկսել են
բոժոժներ (կօկոն) վաճառել:

Միւս անգամ կիսունը Վոլոգայի միւս հանգա-
մանքների վրայ:
Վերջացում են նամակս մի տեղեկութեամբ
խօսքայի հարուածները մինմին նկատվում են մեր
գիւղօրայքում:
Հոկտեմբեր. 1872. Անտոն Մէլեր Գաղայանաց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մոկ. Յէ. Լրագրիւր ասում է, որ շուտով Պե-
տական խորհրդի մէջ քննելու է ռուսաց հայա-
տակութիւնից միւս տեղութիւնների հպատակ անց-
նելու խնդիրը:
Ռուսաստանի Չարայսկոէ գէմտոօի մէջ քննե-
վեցաւ այն խնդիր, թէ արդեօք գիւղական դա-
տարանի մէջ հարկաւոր է պահպանել մարմնա-
կան պատիժներ թէ ոչ: Երկար վիճաբանե-
լուց յետոյ ժողովը բաղադրութիւնը ընդունեց կաւ-
նէցնել մի առաջարկութիւնը: Այդ պատգամաւորը
(գլխավոր) հասարակ ինտելիգենտի դասից, զիւր
կերպով ապացուցանում էր որ ինտելիգենտ ծնծելը
ոչինչ օգուտ չէ բերում այլ փչացնում է նրա բա-
րոյակաշունթիւնը, որ ուղղութիւն ծնծելով դուք
գրգռում էք նորա մէջ աստիւթիւն գէպի ձեւ
անձը:

„Голосъ“ ռուսաց լրագիրը խօսելով էր 170-որդ
համարի առաջնորդող յօդվածի մէջ կովկասեան
տեղական լեզուների խնդրի մասին, ասում է թէ
կայ կովկասի հայերի մէջ մի կուսակցութիւն „Նոր
Հայաստան (Молодая Арменія) անվանված, որ ձգ-
տում է իւր թէ հայոց ազգութեան վերականգնե-
լուն և որ այդ կուսակցութեան արձագանքը „Մը-
շակ“ լրագիրն է... Մենք հասարակութեան
գաղափարներն ենք թողնում վճակել, որքան
անհիմն են այդ տեսակ խօսքերը:

*) Крәпп աղած տորոն. մի գերմանացի պ. Ֆ.
Լէմկու անուամբ Գարբանդում կառուցած է մի
մեծ միջինապ տորոն աղալու. մի փութ չոր տո-
րոն տուողը ստանում է 32 փունթ կրապ և 1
ուրբի 20 կոպ. աղալու վարձը է վճարում: Կը-
րապը միշտ 3 րոպ. 50 կոպ. կամ 4 րոպեի աւել
արժէ տորոնից, այս տարի սրա գինը 14 րոպ. 50
կոպ. էր Ն. տոնավաճառում, իսկ այժմ 16 րոպ.
50 կոպ. է վաճառվում Մոսկուայումը կանխիկ:
Հեղ. Ծան.

*) Գերմաներէն լատից երկի աղալալոված խօսքը,
որովհետեւ գերմաներէն լեզվով տորոն անուան-
վում է Krapp:

Երեկ „Голосъ“ լրագրի պատուելի խմբագրու-
թիւնն է խմանում, որ լրագիրները նորա համար
են հրատարակում, որ լուսաւորեն մար-
դիկն և րիւն, և ոչ թէ մի ազգութիւն վերա-
կան գնեցնելու հպատակով: Եթէ լրագիրները
ու գրքերի հրատարակութեամբ կարելի կը լինէր
ազգութիւնները վերականգնեցնել, —այն ժամա-
նակ ընկած ազգութիւնները ամեն օր կը վերա-
կանգնէին... Բայց պատուելի խմբագրութիւնը
ուրիշ շատ բաներ էլ չէ խմանում, նա չէ խմանում
որ Վրաստանի, խմբութի և Միգրելիայի լեզու-
ների մի լեզվի բաղադրանք են, որ այդ երկիր-
ների բնակիչները միմեանց հասկանում են, որ
հայոց և վրաց լեզուները ունեն իրանց հարուստ
գրականութիւն, որ այդ լեզուները ունեն իրանց
գրքերը, որոց միջոցով ամեն միւրը կարելի է յայտ-
նել... և այլն:

Մենք լսում ենք, որ Թիֆլիսի հայոց բարձր
շրջաններից մինի մէջ ծնվեցաւ գովելի միտքը մի
կօնցէրտ աղ յօդուտ Մօսկվայի չքաւոր ու-
սանօքների:

Մենք լսում ենք, որ նոյեմբերի 7-ին Թիֆլիսի
հայ-միլիոնների խումբը գիտաւորութիւն ունի
Թիֆլիսի մեծ թատրոնում մի ներկայացում տալ,
և որ կը ներկայացվի պ. Գարբիէ Սուգուկեանցի
„Ելի մէկ Զօ“ պիեստն:

Մոկ. Յէ. Լրագրին հաղորդում են հեռագ-
րով, որ Շվեյցարիայում բռնկեցաւ ռուս Նե-
չայէլը և ռուսաց իշխանութեանը յանձնվեցաւ:
Երկարուղու մի իշխանի մէջ մի Լեհացի փորձեց
աղաղակ յանցանքին, բայց նրան կալանաւորեցին:

Ախայցիայից հաղորդում են միւր, որ դեր. Սու-
քիաս վարդապետ փարդանը տեղափոխվում է
Ալեքսանդրապոլ. լսում ենք որ սորա տեղը նշա-
նակվեցաւ սրբ. Թաթէոս եպիսկոպոսը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՇ Ե ԲՈՒԹԻՈՒԱԳԻ

Շատ անգամ մեր քաղաքական տեսաւ-
թիւնների մէջ մենք խօսել ենք պատերազմի
մասին հասարակութեան զանազան. դասերի
մէջ: Վերջին յօդվածներից մենի մէջ մենք
տեսելիք, որ այդ հասարակական պատերազմը
արդեան եւրոպական կեանքի զիւաւոր յատ-
կութիւնն է: Մենք յաճախ ենք յիշել զա-
նազան դասերի մասին, որք առաջնական և
միմեանց թշնամի բանակների պէս յայտնե-
վում են հասարակական կռիւ անպարիզումը:
Բայց անցաւ րկրպոյժ նկարագրելով կու-
սակցութիւնները, մենք չը որոշեցինք նոցա,
ուստի կաթնեւմ ենք. այս անգամ քննել
այդ խնդիրը:

Երեք գլխաւոր կուսակցութիւն կայ Եւ-
րոպայում. աւաւտական (Ֆեօդալ) գուհ-
կական (բուրժուա) և ռաւմապետական
(դէմոկրատ): Հասարակ լեզվով այդ կուսակ-
ցութիւնները պիտի անուանվէին. ազնուա-
կան, քաղաքական, և ժողովրդական: Բայց
այդ բառերի Թարգմանութիւն ձիւղ էր
լինի, որովհետեւ այդ անունները ստացած են
արդէն իրանց սեփական, որոշ միտք:

Բուրժուա բառը Թարգմանելու ժամա-
նակ պէտք է ասենք քաղաքացի, բայց այժ-
ման ժամանակին նա այդ մտքով չէ գործ
դրվում: Պետութեան իւրաքանչիւր անդամը
քաղաքացի է, թէ մշակներ, թէ փոքր ար-
դիւնագէտները, թէ մեծ գումարատէրեր և
այլն, —բայց ամեն միւր նոցանից Բուրժուա
չէ անպատճառ: Պատմական ընթացքին յար-
մարեցնելով, բուրժուազի բառը փոքր առ
փոքր ուրիշ նշանակութիւն ստացաւ. և
այժմ այդ անունը յատկացնում են մի ա-
ռանձին քաղաքական ուղղութեանը,
որ մենք իսկոյն կաշխատենք մեկնել:

Մի երկրի բոլոր բնակիչները, բացառու-
թիւն անելով ազնուական դասը, բաժանե-
վում է սովորաբար երկու դաս, որոնցից միւրը
այնպիսի անձերից է կազմված, որը իրանց
պարուստի աջիւրը միայն անձնական աշխա-

տանքի մէջ են տեսնում: Այդ մարդիկը ոչինչ
օգնութիւն չեն ստանում զրամագլխից (կա-
պիտալից). կամ ունեն մի ամենահամեստ
գումար, որ նոցա միջոց է տալիս պարագել
արդիւնաւոր մի աշխատանքով, որ անունը
է տալիս նրանց անձին և նրանց գերդաստանին:
Ուրեմն այդ դասին պատկանում են մշտներ,
արուեստաւորներ, մանր արդիւնագէտներ և
շինականներ:

Երկրորդ դասը կազմված է այն անձերից,
որք ունեն մեծ սեփականութիւն, այսինքն
մեծ կապիտալիստներ, որոց արդիւնաբե-
րութիւնը հիմնվելով մեծ գումարի վերա,
շահ է բերում: Այդ անձերին կարելի կը
լինէր անուանել մեծ արդիւնագէտներ:

Բայց իւրաքանչիւր մեծ արդիւնագէտը
անպատճառ բուրժուա չէ:

Ճշմարիտ է, որ մշակը, արուեստաւորը, և
առհասարակ սեփականութիւն չունեցող դասը
իրաւունք ունի պահանջել պետութիւնից, որ
նա հոգար նորա դառն և ճնշված նիւթա-
կան զրութիւն բարելաւեցնելու, նա իրա-
ւունք ունի պահանջել, որ պետութիւնը
իր գլխաւոր նպատակ համարէր օգնել նոցա,
որոց ձեռքով են ստեղծվում եւրոպական
կրթութեան բոլոր հարստութիւնները, բոլոր
արդիւնները, առանց որոց հասարակութիւնը
չէր կարող ապրել: Այդ մարդիկը իրաւունք
ունեն պահանջել, որ պետութիւնը օգնէր
նրանց հասնել առատ և ապահով եկա-
մուտի, իսկ այդ վերջինի միջոցով մտաւոր
կրթութեան, ուրեմն բնական էակին (մար-
դին) արժանի գոյութեան:

Բայց այնուամենայնիւ մշակը երբէք չէ
մօռաւում և երբէք չի մոռանայ, որ օրէն-
քով մի անգամ ճանաչված սեփականու-
թիւնը օրինական է և անմոտելի:

Բայց եթէ մեծ արդիւնագէտը չը բաւա-
կանանալով հարստութեան իրական հա-
ճութիւններով, հարստութիւնը ճանաչում
է առհրաժեշտ պայման պետութեան
գործերում մասնակցելու համար, —այն ժա-
մանակ նա դառնում է բուրժուա, որով-
հետեւ միայն սեփականութեան փա-
սը նա ճանաչում է իրաւական պայ-
ման (ցենզ) քաղաքական իշխանութեան
մէջ մասնակցելու: Այդպիսի ուրեմն նա
իրան յայտնում է արտօնութիւն ունեցող
դաս ժողովրդի մէջ, այնպիսի դաս, որ իրան
միայն թոյլ տալով մասնակցել պետական
իշխանութեան մէջ, կամենում է բոլոր հա-
սարակական հիմնարկութիւնները մշտ-
ցնել իր ցանկութիւնները, որք առանձնա-
կան ուղղութիւն ունեն:

Ուրեմն, համարտելով մեր բոլոր ասածը,
մենք կրկնում ենք. բուրժուապական կու-
սակցութիւնը, այնպիսի մի կուսակցութիւն
է, որ պետութեան բոլոր գործերի կառա-
վարութիւնը կամենում է այնպիսի անձերի
ձեռքը գցել, որք մեծ կապիտալիստների
(զրամագլխների) տէր անձինք են:

Ուրեմն այդ կուսակցութեանը կարող են
համարել միայն հարուստ անձինք, —ամե-
նեւն ոչ. այդ կուսակցութիւնը իր ան-
գամներին թուում հաշվում է և աղ-
քատ մարդիկների, մեծ մասամբ կրթված
(կայ կրթութիւն և կրթութիւն), որք
ազդեցութիւն ունենալով պակաս կրթու-
թեան տէր հարուստ մարդիկների վերա, ծա-
ռայում են նրանց նպատակներին, ստանում
են նոցանցից ապրուստի համար հարկաւոր
միջոցները և այսպէս պաշտպանում են նը-
րանց տիրապետութիւնը երկրի մէջ:

Ահա բուրժուազի անուանված կու-
սակցութեան զրութիւնը Եւրոպայի մէջ:
Նա հասարակական կուռի մէջ օգնութիւն
է խնդրում մի գործը միջոցից, այն է հա-
րստութիւնից, որի առաջ ամեն բան չըն-
չին է... և բայց սորանից նա իր նպատակ-
ներին ծառայեցնում է մտաւոր ոյժերի մեծ
մասը, թէ գիտնական, թէ օրաբանական:

Օգուտ քաղելով այդ երկու միջոցներից,
բուրժուազի անուանված կուսակցու-
թիւնը հանդիսանում է ամենակարող ոյժ
Եւրոպայի մէջ, այնպէս որ եւրոպական
կեանքի ժամանակից շրջանը կարելի է ա-
նուանել. բուրժուազական պատմա-
կան շրջան:

ԺԵ. ՆԱՄՈՒԿ

Պ. Բաճիթի ուղեւորութիւնից Պարսկասա-
սանում:

Մի քանի օրից յետոյ ես կրկին գնացի միասիո-
նարների տունը, ուր բնակվում էին հինգ ամիր-
կացի մետոդիստների ընտանիքներ: Իմ գլխաւոր
նպատակն էր տեսնել նոցա հիմնարկութիւն
ները, որ տեղաւորուած էին նոցա տան մէջ: Մի
երիտասարդ միասիոնար, Մստեր Լաբերի անունով,
բարեհաճեցաւ ցույցանել ինձ բոլորը:

Նախ և յառաջ մեր մտանք տպարանը, ուր գոր-
ծում էր մի հատ արագատիպ մամուլ միայն: Գըր-
քեր տպվում էին միայն Ասորոց լեռուով, որոց տա-
ռերի ձեւը և գեղեցկութիւնը գերազանցվում էին
մի ժամանակ Լժուրայում նոյն լեզուով տպուած
Աստուածաշունթի գրատպութիւնից: Բացի Աս-
տուածաշունթից և դանազան կրօնական ու աս-
տուածաբանական պարունակութիւն ունեցող գըր-
քերից, այդ տպարանում տպվում է Ասորոց լե-
ռուաւ մի պարբերական թերթ Զարըրդ-բա-
րայ անունով, որ նշանակում է Լուսոյ արշալոյս
և ունի կատարեալ կրօնական ուղղութիւն:

Ինձ վերայ շատ ախորժ տպաւորութիւն ունե-
ցաւ, երբ Մստեր-Լաբերին յայտնեց, թէ նոցա
մամուլը գործում է առանց ցենզորի քննադատու-
թեան:

Ուրեմն գրատպութիւնը Պարսկաստանում վայե-
լում է կատարեալ ազատութիւն:

—Այդ թէ թէ ազատութիւնիցն է, ժպտելով պա-
տասխանեց միասիոնարը. այլ Կառավարութեան
անգիտակցութիւնից, որ տակաւին ծանօթ չէ նո-
րան մամուլի և ցենզորի նշանակութիւնը:

—Ուրեմն դուք կարող էք օգուտ քաղել դո-
րանից:

Միասիոնարը դարձեալ ժպտեցաւ և ոչինչ չը
պատասխանեց:

Տպարանից մեր մտանք նոցա գրատունը: Թէ և
այնտեղ ամբարուած էր քաղաքիւ հատորներ դա-
նազան տորոնապ կրօնական և արհեստական գըր-
քերի, բայց մի բան միայն առաւելապէս ուրախա-
ցոյց ինձ, որ միասիոնարները իւրանց ուղարու-
թիւնից չէին թողել հաւաքել այնտեղ ժամանակի
կորստէն զիւր մնացած Ասորերէն մագաղաթեայ
գրչազրները, որոց ուսումնասիրութիւնը կարող է
լոյս ձգել գիտութեան վերայ արեւելքի վերաբե-
րութեամբ:

Իւրեանց տան մէջ միասիոնարներն ունէին և
ապագակցոյ:

Մի երիտասարդ ընկլիս բժիշկ այնտեղ կանգ-
նած նայում էր հիւանդներին և զեղ էր տալիս:
—Մեր բժիշկը. ասաց Մստեր Լաբերին, նայում
է հիւանդներին և այցելութիւն է գործում նոցա
մօտ առանց վարձատրութեան. զեղերն ստացվում
են մեր ապտեղից նոյնպէս ձրի: Այդ հանգաման-
քում մեր խորութիւն չեմք դնում ազգերի և
կրօնքերի մէջ:

—Այդ մի մարդասիրական գործ է. պատաս-
խանել ես. մանաւանդ մի այդպիսի երկրում, ուր
չը գան եւրոպացի բժիշկներ:

Միասիոնարների տանում կար և մի հիւրանոց:
Մստեր Լաբերին հրաւիրեց ինձ և այն տեսնելու:

—Այդ հիւրանոցում կերակրվում են, ասաց նա,
մեր ժողովրդից և օտարներից այնպիսի մարդիկ,
որք, զանազան տեղերից քաղաքս գալով, ուրիշ
տեղ չունէին օթեանելու: Այստեղ մեր հաց եւը
տալիս և աղքատներին: Հիւրանոցի ծախսը մեր
առաքելութիւնը իւր իրայ է առնում:

Այնուհետեւ մեր մտանք օրերորդաց գիւղերովի
ուսումնասրանը: Նա կառավարվում էր երկու ամե-
րիկացի վարժուհիների վերապետութեան տակ,
որոց միւրը կալվում էր Միս Բայիս, միւսը՝ Միսիս
Բէյ:

Ուսումնասրանում դասատուութեան գլխաւոր լե-
զուն Ասորաց էր. վարժուհիք շատ լաւ գիտում
էին այդ լեզուն: Ես դարմացայ, թէ ինչու չէին
սովորեցնում անգլիերէն:

—Մեր մեր լեզուն չեմք սովորեցնում ոչ մի ու-
սումնասրանում, որ հիմնել եմք Պարսկաստանում:
Ասաց Մստեր Լաբերին:

—Ինչու: Հարց արի ես:

—Մեր նպատակն այն է, որ ամէն ազգ, որոց
մէջ մեր լուսաւորութիւնը, խզի ազատութիւն ու

Խմբագիր—Հրատարակող Պ ր ի ց ու Ն ր ծ ր ա չ ն ի :